ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 05/2023

ՎԱՂԱՐՇԱԿ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 դեկտեմբերի, 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մ. Գալստյանի, Ա. Փաշինյանի և Լ. Ալեքսանյան (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Վաղարշակ Ամիրխանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 17-ին հարուցված թիվ 05/2023 վարույթի նյութերը.

պարզեց.

Նախապատմություն

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հաստատած անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման պլանով[1] սահմանված Կառավարության անդամների և Կառավարությանը ենթակա մարմինների

[1] http://cpcarmenia.am/hy/news/item/2023/11/24/1/

ղեկավարների ու նրանց տեղակալների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգման շրջանակում իրականացվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանի 2022 թվականի շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրման ենթակա տվյալների վերլուծություն, ինչի արդյունքում արձանագրվել է, որ Վաղարշակ Ամիրխանյանը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը ստանձնել է 2021 թվական մայիսի 25-ին: Միաժամանակ, Վաղարշակ Ամիրխանյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ընտրվել է համայնքի ավագանու անդամ:

2. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պաշտոնական կայքից (https://www.ecoinspect.am/public/hy) իրական ռեժիմում ստացված տեղեկատվության համաձայն՝ Վաղարշակ Ամիրխանյանը զբաղեցնում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

3. 2023 թվականի նոյեմբերիի 17-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 05/2023 որոշումը՝ Վաղարշակ Ամիրխանյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

4. 2023 թվականի նոյեմբերի 17-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին Հանձնաժողովի որոշումը հանձնվել է Վաղարշակ Ամիրխանյանին՝ միաժամանակ թիվ 01/2538-2023 գրությամբ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

5. Հանձնաժողովում 2023 թվականի նոյեմբերի 30-ին ստացված գրությամբ Վաղարշակ Ամիրխանյանը ներկայացրել է պարզաբանում հարուցված վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ: Գրությանը կից ներկայացվել է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին ուղղված նույն համայնքի ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ դիմումը:

6. Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 01/2760-2023 և թիվ 01/2760-2023 գրություններով տեղեկատվություն է հայցել՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից և Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարից Վաղարշակ

Ամիրխանյանի՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:

7. Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ Ե-4595 գրությամբ պատասխան է ներկայացվել Հանձնաժողով առ այն, որ Վաղարշակ Ամիրխանյանի լիազորությունները 2023 թվականի դեկտեմբերի 5-ից դադարեցվել են և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված ժամկետում և համայնքի ավագանու արձանագրությունը ներկայացվել է թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Նշված գրությանը կից ներկայացվել է նաև Նաիրի համայնքի ավագանու արձանագրությունը Վաղարշակ Ամիրխանյանի լիազրությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 01-770 գրությամբ պատասխան է ներկայացվել Հանձնաժողով առ այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքի «Ընտրություններ» բաժնում զետեղված «ՏԻՄ համամասնական» հղման ներքո (որը լրացվում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից)՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու ընտրությունների վերաբերյալ նյութերում ցուցակի 1-ին համարի ներքո գտնվող Վաղարշակ Վահանի Ամիրխանյանի մանդատը 2023 թվականի դեկտեմբերի 12-ից դադարած է:

I. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2023 թվականի նոյեմբերի 30-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Վաղարշակ Ամիրխանյանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ վերջինս մինչ օրս ավագանու անդամի պաշտոնից չի հրաժարվել՝ առաջնորդվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, համաձայն որի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Միաժամանակ, վերջինս նույն գրությամբ հայտնել է նաև, որ

Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 01/2538-2023 գրությամբ նշված անհամատեղելիության պահանջը վերացնելու նպատակով 2023 թվականի նոյեմբերի 30-ին դիմել է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու նպատակով, միաժամանակ պարզաբանմանը կից ներկայացրել է իր կողմից վկայակոչված դիմումը:

Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գործունեությանն առնչվող տեղեկություններ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պաշտոնական կայքից (https://www.ecoinspect.am/public/hy) իրական ռեժիմում ստացված տեղեկատվության համաձայն՝ Վաղարշակ Ամիրխանյանը զբաղեցնում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

II. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1.Վաղարշակ Ամիրխանյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից ընտրվել է համայնքի ավագանու անդամ:

2. ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 564-Ա որոշման համաձայն՝ Վաղարշակ Ամիրխանյանը նշանակվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

3. 2023 թվականի նոյեմբերի 30-ին Վաղարշակ Ամիրխանյանը Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին է հասցեագրել դիմում՝ նույն համայնքի ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:

4. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը միաժամանակ զբաղեցրել է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամի պաշտոնը:

5. Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամի մանդատը 2023 թվականի դեկտեմբերի 12-ից դադարած է:

III. Անհամապատասխանության պահանջին առաջադրվող օրենսդրական կարգավորումներ

Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող** անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:*

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հանրային պաշտոն զբաղեցնող անձինք*** (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ **համայնքի ավագանու անդամը** չի կարող միաժամանակ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում, լինել համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի պաշտոնակատար կամ վարչական ղեկավար, աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ պետական և ***համայնքային:*** Նույն հոդվածի համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ ***քաղաքական,*** վարչական և հայեցողական:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***համայնքային քաղաքական պաշտոններն են*** համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, ***համայնքի ավագանու անդամի*** պաշտոնները:

Կառավարությանը ենթակա **տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի** պաշտոնը, համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, **պետական վարչական** պաշտոն է, նույն օրենքի իմաստով հանդիսանում է **հանրային պաշտոն**:

IV. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ **տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի**՝ պետական վարչական պաշտոնը հանդիսանում է ***հանրային պաշտոն***, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը **համայնքային քաղաքական** պաշտոն է, ուստի Օրենքի իմաստով՝ **տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի** պաշտոնը զբաղեցնող անձի համար այն չի դիտարկվում ***իբրև իր կարգավիճակով պայմանավորված այլ պաշտոն:***

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց** (ընտրվելուց) հետո՝ մեկ

ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի ***1-ին մասով սահմանված պահանջների կատարումը***:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Վաղարշակ Ամիրխանյանը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնի հետ միաժամանակ զբաղեցրել է իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում՝ հանդիսանալով ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամ: Նշված անհամատեղելիության պահանջը վերացնելու նպատակով վերջինս **2023 թվականի նոյեմբերի 30-ին** Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին է հասցեագրել դիմում նույն համայնքի **ավագանու անդամի իր լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ ***վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը*** կարող է կարճվել, եթե՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Վերոնշյալ դրույթով սահմանված կարգով վարույթի կարճման հիմքերի կիրառելիության հարցը գնահատելիս՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդադառնալ հետևյալ իրավակարգավորումներին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ վարույթների հարուցման հիմքերը, որոնց շրջանակում ամրագրված է հետևյալը.

(---)

3) **Հանձնաժողովի նախաձեռնությամբ**՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ մասի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց (--)

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված *անհամատեղելիության պահանջների (---) առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ*:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները **չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն** պետական կամ **տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարութը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ *պաշտոն զբաղեցնող անձի կողմից* (--) անհամատեղելիության պահանջների *խախտման առկայության կամ բացակայության մասին*:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են **պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով** նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ **անհամատեղելիության պահանջների** առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել **հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքով սահմանված պահանջների առերևույթ խախտման** հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ, արդյունքում լուծել

հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից *խախտման առկայության կամ բացակայության փաստը*:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և վերոնշյալ իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովը ***արձանագրում է.***

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված **հանրային պաշտոն** *զբաղեցնող* Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանը, միաժամանակ զբաղեցնելով ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամի պաշտոնը, մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը զբաղեցրել է իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում.
2. Վաղարշակ Ամիրխանյանը, Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթի շրջանակներում, 2023 թվականի նոյեմբերի 30-ին Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին է հասցեագրել դիմում նույն համայնքի ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:

Միաժամանակ, Հանձնաժողովն էական է համարում և վերոնշյալ փաստերը, սույն գործով գնահատման առարկա է դարձնում նաև այն հանգամանքի համակցությամբ, որ ավագանու անդամի համար 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՕ-268-Ն օրենքի 31-րդ հոդվածում բացառության սահմանումը առաջացրել է որոշակի տարընկալում պաշտոնների համատեղելիության տեսանկյունից: Այդուհանդերձ, հանրային (հանրային ծառայության) պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնի համատեղելիությունն անհրաժեշտ է բացահայտել ոչ միայն ավագանու անդամի նկատմամբ կիրառվող սահմանափակումների, ***այլ հանրային (հանրային ծառայության) պաշտոններին*** ներկայացվող պահանջների համատեքստում, ըստ որի վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Ըստ գործում առկա փաստական տվյալների՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ վերացնելու Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտումը: Արդյունքում, Վաղարշակ Վահանի Ամիրխանյանը 2023 թվականի դեկտեմբերի 5-ից չի հանդիսանում Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու անդամ, իսկ համապատասխան համայնքի անդամի մանդատը 2023 թվականի դեկտեմբերի 12-ից փաստացի դադարած է, հետևաբար նաև, սույն վարույթում քննարկված հանգամանքների շրջանակում վերացվել է պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ՝ համայնքի ավագանու անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու խախտումը, որի կապակցությամբ պետք է ընդունվեր համապատասխան եզրակացություն: Ընդ որում, Հանձնաժողովի նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև այն, որ գործով քննարկվող խախտումը, ըստ ներկայացված պարզաբանման, դրսևորվել է՝ ելնելով վերոնշյալ օրենսդրական ձևակերպումներով պայմանավորված՝ պաշտոնների համատեղելիության տեսանկյունից տարընկալման հանգամանքից:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

Կարճել 2023 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 05/2023 որոշմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովի նախաձեռնությամբ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանի նկատմամբ հարուցված վարույթը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**